

«Բլոտի Ազգային Լիգա» հասարակական կազմակերպության  
Կանոնադրության անքակտելի  
Հավելված «Բ»

ԲԼՈՏ (ԲԱԶԱՐ-ԲԼՈՏ) ԹՂԹԱԽԱՂԻ  
ՎԱՐՔԱԿԱՆՈՆԸ

**ՆԱԽԱԳԻԾ**

Հաստատվել է Բլոտի Ազգային Լիգայի Հիմնադիր համագումարում  
2010 թվի դեկտեմբերի 24-ին, Գյումրիում

1. Բլոտը հինավուրց եւ կայացած թղթախաղ է:
2. Բլոտը պատմության ընթացքում փոփոխվել է եւ կարող է փոփոխվել:
3. «Բազար-Բլոտ» թղթախաղը «Բլոտ» թղթախաղի տարատեսակ է: «Բազար բլոտ» տարատեսակը, անցած 35 տարում, մեծ մասայականությունն վայելելով, դարձել է որպէս Բլոտի գերակա խաղատեսակ:
4. Այս Վարքականոնում «Բազար Բլոտ»-ը հայտարարվում է «Բլոտ», իսկ մյուս տեսակները կարող են հիշատակվել իրենց մանրամասն անուններով, ինչպէս օրինակ՝ «Բլոտ 2 հոգու համար» կամ «Բլոտ 3 հոգու համար» ու այլն, կամ կարող են չհիշատակվել:
5. Բլոտի բոլոր հայտնի եւ առայժմ անհայտ տարատեսակները համարվում են խաղային արժեքներ եւ մտավոր ժառանգություն:
6. Բլոտը տրամաբանության, հնարամտության, խորամանկության, իմաստնության, բնագդի, ներըմբռնման, խելքի, հիշողության, գիտելիքի, մրցության, խորահմտություն (էրուդիցիա կամ խորագիտակություն) եւ տրամադրության համադրությամբ ժամանցի տեսակ է:
7. Բլոտը ինտելեկտուալ արժեք է: Այս արժեքին կարող է դավանել եւ/կամ բլոտ խաղալ ցանկացած բանական էակ, անկախ սեռից, տարիքից, ռասայից, ազգային կամ էթնիկական պատկանելությունից, մարդկային կամ քաղաքացիական ազատության աստիճանից, առողջական վիճակից կամ դավանանքից, բնակության վայրից կամ անօթեւանության տեսակից, պաշտոնից կամ զբաղմունքից, սոցիալական դիրքից, քաղաքացիությունից կամ քաղաքացիության բացակայությունից:

8. Բլոտում մրցակիցների միջև արգելվում է խաղի հետ կապված որևէ գրավ կամ խաղադրույք՝ որևէ ելքով հաղթանակի կամ անավարտ խաղի. ֆինանսական, թանկարժեք մետաղների կամ քարերի, անշարժ կամ շարժական գույքի տեսքով եւ այլն:
9. Բլոտի ազգային լիգայի Վարքի Ատյանը անդամությունից զրկում է ցանկացած մրցակցած գույզի, ով Բլոտ է խաղացել կամ խաղում գրավով կամ խաղադրույքով:
10. Բլոտում մրցակցած գույզերն ազատ են հյուրասիրության հրավիրել միմյանց եւ այլոց: Հյուրասիրության պարագան խաղի մասնակիցը կարող է հայտարարել միայն խաղի ավարտից հետո: Հյուրասիրության պարագան խաղի ընթացքում հայտարարելը հավասարազոր է գրավով կամ խաղադրույքով բլոտ խաղալուն, ինչը համարվում է անպատվություն մրցակիցների, մրցավարների, Բլոտը հարգողների նկատմամբ եւ արգելվում է այս կանոնադրությամբ:
11. Բլոտում արգելվում է հուշումը (իշմար կամ նշմար), խարդախությունը, կեղծիքը, խաբեությունը:
12. Բլոտում հուշումը (իշմար կամ նշմար) հավասարազոր է խարդախության:
13. Բլոտում թյուրիմացություններ համարվում են այն բոլոր խաղային եւ հաշվարկային սխալները եւ/կամ վրիպումները, որոնց մասին ակնհայտ է սխալվողի կամ վրիպողի այնպիսի մեղայականը, որն ընդունելի է մրցակիցների եւ հավանական մրցավարների համար որպես բավարար ափսոսանք կամ զղջում:
14. Բլոտում արգելվում է թյուրիմացությունը մեկնաբանել որպես խարդախություն կամ կեղծիք կամ խաբեություն, հավասարապես այնպես, ինչպես արգելվում է խարդախությունը կամ կեղծիքը կամ խաբեությունը մեկնաբանել որպես թյուրիմացություն:
15. Բլոտում ծխելը կարգավորվում է ՀՀ գործող օրենսդրությամբ, իսկ օրենսդրությամբ չկարգավորվող դեպքերում բլոտում ծխելն արտոնվում է միայն բոլոր մրցակիցների, հնարավոր մրցավարների միաձայն համաձայնության դեպքում, եթե առկա է օդափոխման՝ բոլորի համար բավարար համարվող հնարավորություն:
16. Խաղի ընթացքում ծխելու արգելքի պարագայում խաղը մրցակիցներից կամ հնարավոր մրցավարներից ցանկացած մեկի պահանջով, խաղափուլից հետո կարող է ընդմիջվել ծխելու համար նախատեսված 7 րոպե տևող ընդմիջումով: Ծխելու ընդմիջումները չեն կարող լինել ավելի հաճախ, քան 30 րոպեն մեկ անգամ:
17. Խաղը կարող է ընդմիջվել 5 եւ ավելի րոպեով մրցակիցներից կամ հնարավոր մրցավարներից մեկի պահանջով.

18. Բլոտ խաղի ժամանակ մրցակիցները, մրցավարները եւ մրցակիցների դիրքերի երկրաչափական կենտրոնից 3 մետր շառավղով շրջագծով տեղավորված մարդիկ չեն ուտում որեւէ բան,  
չեն հանում կոշիկները եւ/կամ գուլպաները, եթե այդպիսիք ունեն իրենց հագին  
չեն հանում վերնաշապիկը կամ անդրավարտիքը, եթե այդպիսիք ունեն իրենց հագին  
չեն երգում որեւէ եղանակով,  
չեն սուլում,  
անջատում են բջջային հեռախոսների ձայնը, իսկ խաղի հեռուստատեսային նկարահանումների ժամանակ անջատում են նաեւ հեռախոսի էներգասնուցումը,  
չեն աղմկում 30 դեցիբելից ավել:
19. Բլոտ խաղի ժամանակ մրցակիցները կարող են խաղին զուգահեռ.  
ծամոն ծամել՝ առանց չլմփոցի,  
չոպ ծամել՝ անաղմուկ,  
անաղմուկ խմել ալկոհոլային կամ ոչ ալկոհոլային, գազալցված կամ առանց գազալցման, սառույցով կամ առանց սառույցի ըմպելիք,
20. Բլոտի խաղասեղանին կարող են լինել առավելագույնը 32 խաղաթուղթ, խաղաթղթերի տուփ, 1 նոթատետր կամ 1 թերթ թուղթ, 1 գրիչ, մինչեւ 4 հատ ժամացույց, մինչեւ 8 հատ բաժակ:
21. Բլոտի սեղանը սփռոցածածկ չի կարող լինել, կարող է լինել մահուդապատ:
22. Հրապարակային խաղերի ժամանակ խաղացողը կարող է իր քայլը ձգել ոչ ավելի երկար, քան մրցակիցները կհասցնեն 3 հատ անեկդոտ պատմել: Այդ անեկդոտների պատմումից հետո քայլ չկատարելու դեպքում խաղի պարտություն է գրանցվում անեկդոտները պատմող զույգի օգտին: